

4.  $u = o$ . այս փոփոխութեան ենթակայ ե-  
զած են հետեւեալ ձևերը. «կօղիկ» կազմն թէև ա-  
սոր հակառակ կայ կնոկի՝ կաղնի. ինչոհից՝ գնել.  
(այսինքն յիմն առնուլ). խնայ՝ երեխայ, երախայ  
(= \*խնայ, \*խնայա հնադարն ձևերէն) թերևս նաև  
ըզով՝ եղան, երկմասնեայ հոսելի.

5.  $u = ko$ . միակ օրինակն մը մէջ՝ սր է (րկօ)  
զգալլ տարզալլ:

6.  $u = ju$ . նոյնպէս միակ օրինակն մը մէջ.  
հմմա. զիրքնանալ՝ զարթնուլ, արթննալ. թէև  
միւս կողմէ կայ զերքուն՝ զարթուն:

7.  $u = jk$ . այս ձայնափոխութեան ենթակայ  
են հետեւեալ բառերը. յեղնեկցյ՝ աղանի. յիսնի  
յաղթել (ՊԼ. կիրի). յիսս՝ աղա կեղա. յիսսուս՝  
աղաա կեղաա. յիշի՝ աշել, նայել (զ. ու. աշել):  
Բոլոր այս ձևերուն մէջ յի ձայնափոխութիւնը բա-  
ռին սկզբը կը գտնուի. ուստի զժուար չէ ըն-  
դունել թէ ծագած ըլլայ նախաւոր  $u = k$  ձևէն.  
(հմմա. հին հայերէնի  $u = k$  սկսող բառերուն ար-  
դի գրական յի արասանութիւնը. օր. ետիկ = յի.  
եկի), որով վերոյիշեալ ձևերուն հնադարն վիճակը  
կ'ըլլայ. \*կոլեկցյ, \*կիսիկ, \*կիս, \*կիսուս, \*կիշի:  
Ըստ այսմ յառաջ բերուած ձևերը կը պատկա-  
րեն բուն  $u = k$  ձայնափոխութեան:

(Կը շարունակուի)

Հրաչեայ Յ. Աճառեան



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵՆՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՅՈՒ

ՀԱՅՈՅ ՊԼԱՏՄՈՒԹՅԱՆ ՄՂԶ

(ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ և ՈՒՍՈՒԱՏԻ)

(Շարունակութիւն) \*

Ե.

Հ Ա Յ Կ Ի Ա Ռ Ա Ս Պ Ե Լ Ը

Այս առասպելը (Ա. թ. ժ. ժա) ոչ միայն  
կարծեցեալ «վէպից» առած, այլ և ժողովր-  
դական համարելու համար անմիջական հի-  
մունք չունինք: Խորենացին քանի անգամ  
պարզապէս յիշում է, որ գրաւոր աղբիւ-  
րից՝ Մար Արասից է քաղած այն: <sup>1</sup>

Բայց հակառակ Խորենացու վկայութեան,  
ժողովրդական զրոյցներ կամ վէպ են ուզում  
տեսնել անոր մէջ: Այսպէս շնորհ. Միարան  
Գ. Տ. Մկրտչեան <sup>1</sup> Ա. գրքի Ժ. զուրն ամ-  
բողջապէս Մար Արասից քաղած համարելուց  
յետոյ՝ յարում է. «Միայն տեղ տեղ Խորե-  
նացին աւելացնում է. «Այս արգարացուցանէ  
զանգիր հին ասացեալ զրոյց» — «Արգարացու-  
ցանէ և այս գրասացեալ զրոյցս անգիրս»: Այս  
յու կըռածնիւրից մենք իրաւունք ունինք հե-  
տեցնելու, որ Խորենացու նկարագրութիւն-  
ները որչափ Մարարասի նոյնչափ և թերեւ  
աւելի էլ զրոյցներն հետեւութեամբ են զը-  
րուած» և այս պար քիչ ստուիւ շարունակում  
է նա. «Խորենացին... Մարարասի համառօտ  
հասուածը երկրորդելով, քիչ թէ շատ են-  
թարկում է իրեն ծանօթ վիպական երգե-  
րի և զրոյցների ազդեցութեանը»: Նա նոյն  
կարծիքն ունի և յաջորդ ԺԱ. գլխի նկատ-  
մամբ:

Սակայն այդ սխալ է: Խորենացին Հայկի  
պատմութեան համար ոչ մի տեղ անգիր  
զրոյցներ կամ վէպ վիպական երգ չէ յի-  
շում ինչպէս յայտնում են Էմին. պ. Խալա-  
թեան, շնորհ. Միարան և ուրիշները: Ժ.  
գլխի մէջ երկու անգամ յիշած «անգիր հին  
զրոյցները» զարմանալի կերպով սխալ թարգ-  
մանելով միայն՝ վերագրում են Հայկին: «Այս  
արդարացուցանէ զանգիր հին ասացեալ  
զրոյց» թարգմանում է Էմինը. Это оправ-  
дывается древними устными сказаниями, «Այս  
արգարանում է հին անգիր զրոյցներով»: Նոյնպէս և պ. Խալաթեանը <sup>2</sup> «Անգիր հին  
զրոյցներ, որոնք արգարացնում են հայոց  
Հայկ նահապետի մասին տարեգրական պատ-  
մութիւնը, որ կայ Քաղզեսական գրքի մէջ»: Ուրեմն զուրս է գալիս որ կային ժողովրդի  
մէջ Հայկի մասին զրոյցներ և Խորենացին

մասնակ սկսեալ ասացից: «Նոյն ժամանակագիր  
յառաջ մասնեալ սուք» (Ա. ր.): «Ասուք» (Մար Արաս):  
«Յիշի եւ ասասուք» (Մար Արասի պատմութեան այս  
հաստածի մէջ էլ) պատմութիւնս (Ա. ժ.): «Եւ յառաջ  
մասնեալ զրամս իւր սուք» (Մար Արաս): Ասուք  
(Ա. ժ.):

<sup>1</sup> Խոր. պատմ. ուսումն. եր. 64:

<sup>2</sup> Халат. Арм. Эпосъ եր. 43:

\* Տես. Արարատ, 1899 թ. համար է. եր. 360:

<sup>1</sup> «Յարսիկ... երկրորդեմ այժմ» և թ նոյն

ուզում է այդ անգիրը գրոյցներով արդարացնել Հայկի սպասամբութիւնն ըստ Մար Արասի: Այդ թարգմանիչները սակայն մոռանում են որ այդպէս հասկանալու համար՝ բնագրի մէջ պէտք է լինէր. «Զայս արդարացուցանեն անգիր հին գրոյցը»: <sup>1</sup> Բնագիրը յեղաթիւրելով և այս գերանուան տակ ամբողջ գլխի պատմութիւնը. «Թաղազ սպասամբութեանն Հայկայ հասկանալով <sup>2</sup>, ի հարկէ հեշտութեամբ երեւակայում է թէ Խորենացու յիշած այդ գրոյցները Հայկի պատմութեանն են վերարբուում մանաւանդ երբ մարդ մտադրուած է, ինչպէս Էմին ցոյց տալ թէ հայոց հին պատմութիւնը վեպից գրոյցներից և ին. քաղուած է, կամ թէ ինչպէս պ. Խալաթեան թէ իբր Խորենացին «Վեպի» տեղ է ուզում ծախել շատ բան:

Հ. Ստեփանէն միայն նկատելով Էմինի սխալ թարգմանութիւնը բառացի թարգմանում է. «Այս արդարացում է անգիր հին գրոյցները» իսկ երկրորդ անգամին. «Այս աւանդութիւնն ևս ճշմարտացիում է անգիր գրոյցները»: Սակայն այդ թարգմանութիւնն ևս բոլորովին անսխալ չէ: Այդտեղ ևս բնագիրը յեղաթիւրած է. Հ. Ստեփանէն ևս միւս թարգմանիչների հետ առանց որեէ ծանօթութեան՝ դուրս է ձգում ասացեալ բառը՝ որ Խորենացին դնում է երկու անգամին ևս:

«Ասել» բայը մեր պատմագիրը շատ յաճախ «յիշատակել» պատմել» բայերի իմաստով է գործ ածում: Իսկ «յառաջադոյն ասացար» (Ա. թ.), «Ռուպէս վերագոյն ասացար» (Ա. ժր. Ժէ.) և ին դարձուածների փոխանակ գործ է ածում միայն անցեալ դերբայը՝ ասացեալ. «Սակայն ասացեալ (վերեում յիշատակած) արդարանութիւնդ հաւասար է» (Ա. և): Ռշ յառաջինս մեր ասացեալ (արդէն պատմած, գրած) գիրս և ոչ ի վերջին բանս» (Ա. երկրորդ յաւելում): Սոյն տեղում: «Այս է առաջին նորա ասացեալն և անբարի բարեբա-

րութիւնն» <sup>1</sup>: «Ոմն Մարտի գիկեայ միարանեալ զասացեալ (վերեում յիշուած) կողմանս զայստիկ» (Բ. դ.), Այսպէս և «Այս արդարացուցանել զանգիր հին ասացեալ գրոյցս» նշանակում է. «Այս արդարացնում է վերեում յիշատակուած անգիր հին գրոյցները»:

Կրնչանակէ վերեում Խորենացին պատմել է անգիր հին գրոյցներ, որոնք ճիշտ կամ սուտ լինելը պատմագրի համար՝ այդ գրոյցների մասին գրելիս յայտնի չէ եղել և այժմ Մար Արասի պատմութեամբ ճշտում է այդ վերեում յիշած գրոյցները և ոչ թէ Մար Արասի պատմութեան համար վկայութեան է բերում անգիր հին գրոյցներ, ինչպէս յեղաշրջած կամ յեղաթիւրած հասկանում են:

Որո՞նք են վերեում յիշած այդ անգիր հին գրոյցները:

Հաւաստեալ Ա. գ. «Թաղազ Ոլումպիոզորայ փիլիսոփայի անգիր գրոյցացն» վերնագրի տակ պատմած հին գրոյցները թէ մեր հասկացածը ճիշտ է, շատ պարզ կարելի է տեսնել գրոյցների բովանդակութիւնից:

Ոլումպիոզորայի անգիր գրոյցները, որոնք բնաւ աննշութիւն չունին Հայկի առասպելի հետ վերարբուում են Հայաստանում կամ Հայաստանի սահմանների վրայ — յատկապէս Տարօնում և այնտեղում ուր Սոյ (Քսիսութիւն) ցամաք է ելել, ջրհեղեղից յետոյ բնակիչներ լինելուն: «Թեա նաւելոյ Քսիսութիւնայ [Սոյ] ի Հոյս և դիպելոյ ցամաքի գնայ... մի յորդոց նորա [Սոյ] կռեցեալն Սիմ ընդ արևմուտս հիւսիսոյ գիտել զերկիրն և գիպեալ զաշտի միում փոքու առ երկայնամասի միով լեռամն գետոց ընդ մէջ նորա անցանելով ի կողմանս Ատրեստանի, դադարէ առ զեռօփն երկուսնեայ աւուրս և անուանէ յանուն իւր զլեռան Սիմ և դառնայ ան-

1. Հ. Ստեփանէն բարգմանում է. «Այս է նորա ասացիլն և անբարի ասում» (=կռումս անուանում) բարեբարոյիներ. բայց պէտք է հասկանալ. «Այս է նորա վերեում յիշատակուած ասացիլն և անբարի բարեբարոյիներ»: Վերեում (Ա. յաւելում) յիշած է այդ նոյն բաներով, բայց առանց ասացեալ բառի «Եւ անբարի ասացիլն նորա բարեբարոյեանն»: Իսկ երկրորդ անգամին ասացեալ բառով միայն վերեում յիշած լինելն է յայտնում:

1. Հմեռ. Ա. ժր. «Եւ աշխարհիս մերոյ առասպելի գրագմաննուս Աստիկն արդարացուցանեալն:  
2. Халат. Арм. Эпосъ. кр. 43. ծան. 3.

դրէն յարեւելս հարաւոյ: ուստի եկն [այսինքն այնտեղ, ուր տապանը ցամաք էր ելել]: Իսկ ի կրտսերագունից որդւոյն նորա Տարբան անուն: Երեսուն ուստեօք և հնգեատան գասեօք և նոցին արամբ մեկնեալ ի հօրէնս ընտել անորէն ի նոյն զետեզերնս: յորոյ անուն և զաւանն անուանէ Տարօն: և զանուն տեղոյն ուր բնակեցան՝ կոչէ Յրօնս: զի անդ զառաջինն սկիզբն եղև բաժանելոյ որդւոց նորա ի նմանէս:

Այս անգիրը գրոյցներէ մէջ յիշուած երկու աշխարհադրական տեղերից, ուր Նոյի որդիքը բնակում են՝ Տարօնը յայտնի է: Ո՛րն է այն տեղը, ուր Զոսիմոթիւս [Նոյ] ցամաք է ելնում և ուր Սիմ վերագառնում է զէպի Տարօնի կողմերը գնալուց յետոյ: «Նոյ արեւմուտս հիւսիսոյ (զէպի Տարօն) և յարեւելս հարաւոյ» (Տարօնից) ուղղութիւնը ցոյց է տալիս: որ տապանի ցամաք ելած, ուստի և Սիմի բնակած տեղը՝ ըստ Ոլումպիոգորոսի գրոյցների, Տարօնի հարաւ-արեւելեան՝ կորդուաց կողմերում պէտք է որանել: Եւ արդարեւ, բոլոր հին աւանդութիւններով տապանը ցամաք է ելնում ոչ թէ Մասիսի վրայ, այլ կորդուաց կողմերում: Հնագոյն աւանդութիւնը չի գիտեր՝ թէ Նոյոյ տապանը Մասիսի վրայ է լինում: Ղազար Փարպեցի (Ծ. դար) Այրարատ գաւառի՝ ոգևորութեամբ զբաժն կարագորութեան մէջ (Գլ. է. և Ը.) չի յիշեր բնաւ՝ որ Այրարատայ մէջ Նոյոյ տապանին լիօք կայ: Նոյնպէս Մովսէս Խորենացի ոչ Պատմութեան և ոչ Աշխարհագրութեան մէջ ամենևին չի յիշատակեր: Իսկ Փաւստոս Բիւզանդացի (Գ. 10) կուանդէ՝ որ ս. Յակոբ Մծրնացի տապանին մնացորդները գտած ըլլայ ի լերին: (Մ)արարողայ ի սահմանս այրարատեան տէրութեանն ի գաւառն կորդուաց:» Ըստ այսմ Գ. դարուն հայերն ինչպէս նաև Ասորիք ու Բաբելոնացիք՝ Նոյոյ տապանին լիօք [Արարատ] ոչ թէ Մասիսի սահմանները, այլ կորդուաց աշխարհին մէջ կհնառէին: Առաջինն, որ իրօք Մասիսը Նոյոյ տապանի լիօք կը համարէր է Մ. Հերոնիմոս (Comm. in Isaiam XI 38 vo l. IV1 p. 467 ed. D. vallors): Այսպէս ուրիմն օտար զխնականներու կարկառանք է այս, որ շատ ուշ

— յամենայն դէպս ոչ յառաջ քան զԹ. կամ Ժ. Դար— Հայաստան մուտ գտած է: 1) Թոմա Արմբուսին (Պետրո. եր. 19) զեռ գրում է թէ Տապանը կորդուաց լեռների վրայ է նստել: Ուրիմն, ըստ Ոլումպիոգորոսի անգիրը գրուցանէ՝ Տարօնում և տապանի ցամաք ելած տեղում:— Տարօնի հարաւ-արեւելեան՝ կորդուաց կողմերում [Արարաղում]— բանկում են Նոյի որդիքը: Պատմագիրն այս ըստ Ոլումպիոգորոսի գրուցանէ՝ յիշատակելուց և Հոյոց «երգք ցցոց և պարուց» վկայութեան կոչելուց յետոյ՝ աւելացնում է. «Եւ այսոքիկ գրոյցք սուտ և կամ արդարեւ լիալք, մեղ չէ ինչ փոյթ»: Բայց երբ մեր պատմագիրը Հոյիկ պատմութեան մէջ ըստ Մար Արաբի գտնում է յիշուած թէ միևնոյն տեղում Արարաղում [ուր տապանը ցամաք է ելել], բնակում են յառաջագոյն ցրուած մարդիկ, 2 — իսկոյն աւելացնում է թէ «Այս (Արարաղայ երկրում կորդուաց մէջ, յառաջագոյն ցրուած մարդկանց բնակած լինելը ըստ Մար Արաբի) արդարացուցանէ զանգիր հին ասացեալ գրոյցս (Ոլումպիոգորոսի թէ տապանի ցամաք ելած տեղում որ միևնոյն Արարաղն է կորդուաց մէջ, բնակել է Սիմ):

Այնուհետև շարունակում է Խորենացին ըստ Մար Արաբի. «Եւ ինքն [Հայկ] խաղաց [Արարաղից]՝ սակ [Մար Արաբ], այլով սպիտակ ընդ արեւմուտս հիւսիսոյ՝ զայ բնակէ ի բարձրաւանդակ զաշտի միում և անուանէ զանուն լեռնադաշտակին՝ Հարք...» Երբ ի և

1. 2. Գեյցեր, Համառոտ պատմութիւն Հայոց, բարձր. 2. Գր. Գալիսեանեան, Վիեննա 1897, եր. 6 հս: Տես այս մասին մանրամասներ, ինչպէս և կորդուաց կորների Արարաղի մասին՝ ուր գոյիս է Հայկ, К. Патканов, Ванский надписи, С. Петербурга 1881 եր. 92 հսն. Նոյոյ Բիւզանդի Փննակոյն, Պոսկ Ա. եր. 43 հսն. 61 հսն. Պոսկ Բ. եր. 64. Միարան, Հայկականի, Վաղարշապատ, 1894 եր. 18 հս.

2. Չու արտեալ գիտց [Հայկ] յերկիրն Արարատայ, որ է ի կորդուաց հիւսիսոյ [Բաբելոնի համեմատութեամբ, Վանի հարաւային կողմերում, կորդուաց մէջ] ... երեւոյ ընտել ի շէն նստին միում ի դաշտավայրի յարում սակաւ յառաջագոյն ցրուելոցն դաշտեան բնակիւն, զորս ննազանդ իւր արտեալ Հայկ շինե անդ տեղ ընտելութեան կառուածոց և տայ ի մտանցութիւն կաղմայ արդոյ Արմենայ:»

աստանօր [Մար Աբասի պատմութեան այս տեղում էլ] պատմութիւնս. հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ առ երկայնանստի միով լերամբն քնակեալ յառաջագոյն սրբ սակաք՝ ինքնակամ հազարնդիկ դիւցադինն: Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անգիրսս:

Արդ Հարքի հարաւային կողմում Տարօնն է Սիմ լեռան ստորտաներում: Եիշենք ըստ Ուրմպիողորոսի անգիր զրոյցներէ՝ Սիմի գնալը Տապանի ցամաք ելած տեղից— Աբարադից— գէպի Տարօն՝ ընդ արեւմուտս հիւսիսոյ: որ ուղղութեամբ և Հայկն է գնում և բնակուելը Տարօնում ի պաշտի միում փոքու առ երկայնանստի միով լերամբն: որ է Սիմ լեռը՝ որտեղ և Սիմի սրգին Տարբան մնում իւր մարդկանց հետ: այն ժամանակ հասկանալի կը լինի Խորենացու խօսքը թէ «Արդարացուցանէ եւ այս (Տարօնում առ երկայնանստի լերամբն Սիմ: յառաջագոյն բնակութիւն լինելն ըստ Մար Աբասի) զասացեալ անգիր զրոյցս» (Ուրմպիողորոսի թէ Տարբան իւր մարդկանց հետ մնում է ջրհեղեղից յետոյ Տարօնում առ երկայնանստի լերամբն Սիմ):

Այսպէս երկու անգամ զործածած այս գերանուան տակ պէտք է հասկանալ ոչ թէ ամբողջ Ժ. գլխի պատմութիւնը «Եղազս ապստամբութեանն Հայկայ» այլ ջրհեղեղից յետոյ Հայկի զարուց առաջ մարդկանց բնակուած լինելը՝ առաջին գէպում՝ Աբարադում, որ տասանը ցամաք է ելած կորուաց մէջ. իսկ երկրորդ գէպում՝ Տարօնում: Այդ երկուսն է և այն հանգամանքից, որ գծուար է կարծել թէ պատմագիրը միևնոյն գլխի մէջ երկրորդ անգամ մի քանի տող միայն յետոյ: միևնոյն քառերով նոյն վկայութիւնը կրկնելու նոյն բանի համար՝ «յաղազս ապստամբութեանն Հայկայ» մանաւանդ որ երկրորդ անգամ գրած է. «Եիշի եւ աստանօր» «Արդարացուցանէ եւ այս» այս էլ նաև այս: որից պարզապէս երևում է, որ երկրորդ այս գերանուան տակ աւելի բան պէտք է հասկանալ և ոչ ինչ որ առաջին այս-ի տակ հասկայում է:

Հայաստանում Հայկի զարուց առաջ,

մարդկանց բնակութիւն լինելն առհասարակ բաւական զբաղեցնում է Խորենացուն: Այսպէս Ա. Ժ. գրում է. «Բայց սքանչելի իմն առ պատմագիրն [Մար Աբաս], թէ ի յոյժ տեղիս դասն բնակեալ ի մարդկանէ յերկրիս մերում ցան և ցիր յառաջ քան զզարուստ բնկին մերոյ նախնւոյն Հայկայ: Այստեղ «Հին անգիր զրոյցները» հետ չէ կապում առաջուց մարդկանց բնակութիւն լինելը, զի երկրի շատ կողմերի մասին է խօսքը: Բայց հենց որ մասնաւորապէս Տարօնի մասին է լինում խօսքը, զարձեալ նոյն «Հին զրոյցները» մէջ են գալի. «Զոր [զգծնեայ Սլաքն] ոչ կարիմ հաւաստեալ ասել ի Հայկայ եթէ յառաջագոյն քան զնա եղելաց յաշխարհին: զոր հին զրոյցքն պատմեն լինել... Զսա կարգէ սակա արամբք պահել զբնտնն: որսալ զքօշն. որք անուանեցան Սղկունիք» (Բ. Ը): Այստեղ յիշուած Հին զրոյցները միևնոյն Ուրմպիողորոսի Հին անգիր զրոյցներն են, աշխարհը Տարօնն է և լեռը՝ Սիմ: 1

Սոյն զրոյցները շարբորդ անգամ ևս յիշում է պատմագիրը. «Եւ ասա ասեմ զրոյց զքանչելի ճերոյն՝ որ ասէր թէ ի նախնեայ ունիմ սովորութիւնս որպի ի հօրէ առնելով զյիշատակ զրուցացս սյսոցիկ, որպէս Ուրմպիողորայն յաղազս Տարօնոյ եւ Սիմն կռնեցեալ լերինն» (Բ. հգ): Այստեղ այդ զրոյցները Հին և անգիր լինելը շրջաբանութեամբ է բացատրում: մինչդեռ մնացած գէպերում Ուրմպիողորոսի զրոյցները և միմիայն անոնք կոչում են միշտ Հին, անգիր:

Թէ ինչ են այդ անգիր Հին զրոյցները և թէ կարո՞ղ էին այդպիսի զրոյցներ լինել հայ ժողովրդի մէջ, այդ մասին յետոյ:

Մեր քննութիւնից երևում է, որ Խորենացու կողմից ոչ մի եւ ոչ իսկ մութն ակնարկութիւն ունինք Հայկի պատմութիւնը ժողովրդական զրոյցներէ քաղած լինելուն: Պատմագիրը պարզապէս յայտնում է, որ միայն գրաւոր աղբիւրից է քաղած այն: Իսկ այդ գրաւոր աղբիւրը, ինչպէս նկատել ենք, կարող է և զիանականների յերիւրում լինել

1. Հմեթ. Բ. ձգ Սիւսեանց սեպտեմբերիս Ողտիս ամեոյը Տարօնում եւ Սիմ լեռը:

ամրողջապէս Տաաներորդ զլխում Հայկի պատմութեան մէջ յիշուած հին անգիր զբրոյցները Հայկի և Բէլի առասպելի հետ առընտելութիւն չունին այլ Տարօնում և Արաբացում մարդկանց յառաջագոյն բնակութիւն լինելուն են վերաբերում: Խորենացին չէ որ ժողովրդական է համարում Հայկի առասպելը, այլ միայն մեր քանասերներից Էմին: Միաբան և ուրիշները:

Այստեղ վերջանում է իսկապէս մեր ասիկքը Հայկի առասպելի մասին: քանի որ Խորենացու յիշած և Խորենացու ձեռով օգտուած ժողովրդական առասպելների ուսումնասիրութեան տեսակէտից՝ առանձին նշանակութիւն չունին այն թեր ու զէմ կարծիքները: Թէ արդեօք Խորենացու մէջ Հայկի առասպելը ժողովրդական վիպական բնուորութիւն ունի՞ր, թէ՞ ընդհակառակն, մի շինծու յերիւրած քան է: Արդեօք Խորենացին է յերիւրել այդ պատմութիւնը, թէ՞ այլ ոք: Խորենացին չէ յիշում այդ առասպելի ժողովրդական լինելու մասին, և մեծ զարմանք չի լինիլ, եթէ դա Խորենացու կամ մի ուրիշ յերիւրածը լինի: Բայց կարող է այդ առասպելը նաև ժողովրդական տարր ունենալ իւր մէջ, զի պէտք չէ մոռնալ այն հանգամանքը, որ մի կողմից Աստուածաշնչի մէջ (Ծայլի ԺԳ. 10. Յօր. 14. 31) Օրին համաստեղութիւնը Հայկ անունով է կոչուած, որով և Հայկ ներկայանում է, համապատասխան Օրինի իրրև առասպելական որսորդ: Իսկ միւս կողմից՝ Աղաթանգեղոսի մէջ ևս զործածուած է հայկաբար բառը: հասանօրէն «հակայարար» բառի իմաստով: <sup>1</sup> Հակայի իմաստ ունի Հայկ բառը և Փիլոսի Թարգմանութեան մէջ, ուր հակների մեծութիւնը «հայկաշար» բառով է արտայայտած: <sup>2</sup>

Այս մութ յիշատակութիւնները ենթադրել են տալիս թէ մի որևէ հսկայ Հայկի մասին զրոյց կամ առասպել կարող է եղած

լինել հայոց մէջ, քանի որ զժուար է կարծել թէ Թարգմանիչները Հայկ բառն իրենցից ստեղծէին Օրին և հակայ նշանակութեամբ: մանաւանդ որ ցայսօր ևս նոյն վանայ կողմերի, ուր Հայկի արարքները կատարուել են, ժողովրդական երգի մէջ զանում ենք յՅէյր = Հայկ բառը մի որոշ համաստեղութեան իմաստով: <sup>1</sup> Եւ երբ մի անգամ որևէ Հայկի մասին ժողովրդական զրոյց կարող է եղած լինել, անհիթեթ չէ ենթադրել թէ Խորենացու զբրաւոր աղբիւրը, Մար Աբաս կամ այլ ոք, յամենայն դէպս, ըստ իւր վկայութեան, ոչ Խորենացին, իւր Հայկի պատմութեան համար օգտուած լինի ժողովրդական զրոյցից: Ուրիշ խօսքով, ժողովրդական տարրը կարող է թէպէտ և ոչ անմիջապէս մտած լինել Հայկի առասպելի մէջ: Այս ի նկատի ունենալով հասանհամաբերի չէ տեսնել, թէ արդեօք Հայկի պատմութիւնը Խորենացու մէջ ունի ժողովրդական վիպական բնուորութիւն, թէ չէ:

Հայկի առասպելի վիպականութեան խնդիրը:— Այս մասին ևս առաջին անգամ ուշադրութիւն դարձնողն Էմին է: Ընկարագիր պատերազմին Բէլայ այնքան զեղուն է մանրապատում հանդամանօք ... մինչ զի անհնար լինի մտադիր ընթերցողին չնկատել ի նոսին հետս երևակայութեան վիպասանին և այն՝ հայ վիպասանին: <sup>2</sup> Մի ուրիշ տեղ <sup>3</sup> գրում է. «Այս հատուածներում ընթերցողը հանդիպում է այնպիսի դարձուածների, ամականների և նկարագիրների, որք յատուկ են ժողովրդական վիպասանութեան»:

1. Երեկոց «Վանայ սագ», Քիւմյիս, 1885. Ա. եր. 52. «Կրու Խէյֆ», ուր ծանօթութեան մէջ դրած Կ. «աստեղաց այն խոսքն, որ արշալուստեան շատ անգամ ստեղծուած է արեւելեան կողմից: Խէյֆ մէկ մէկ յառար վիպականական նշան է միայն՝ ըստ Երեկոցի՝ վերջի փափկած քառյակ արտասանութիւնը ցուցնելու համար: Հնե. Տարեյֆ, սիւեյֆ, խանեյֆ, արայգ, պայգ և նման գրութեան մեծերը: Սակայն «Խէյֆ» մեծը և կարգուել է սալի «Հայֆ»: Արդեօք բանահմայք վերջի կ'առար, որ նոյնպէս փափկուած է այդ բարբառի մէջ, շփոթել է քառյակի հետ: քն այդ բառն իրօք քառյակ է Վանայ բարբառի մէջ: Հայիլ, ինչպիսի անորոգում է պ. Հ. Ամասեան, Մոկացի կոչում են «Խէյֆ»:

2. Էմին, Վեպ հն. Հայ. եր. 97:

3. Նոյն. Մ. Խորենացի և Հայոց հին վիպերը եր. 39:

1. «Անեւայ սիւայագրն (Տրդս) հայկաբար գուր արմանն» (Աղար. Քիւմյիս 1882 եր. 446):

2. Տես Նոր Բանգ. Հայկ. լեզ. «Հայկաշար» բառի ակն. նոյնպէս Xaam. ApM. Գոց, եր. 75, 118. Իսկ Հայկի մասին անիկ մտերմանս ծանօթութիւններ հ. Արշակունի Հիմ Հաւասֆ, եր. 236 հն. 119 հն.:

Նաս Հայկի ամբողջ պատմութիւնը «Վիպասանութիւնից» Խորենացու ձեռով քաղած համարելուց յետոյ նոյն իսկ աւելի հեռուն է գնում համարելով թէ «Պատմադիրը խանդարում է Երզնիի չափարեւական ձեւը և վիպասանների բանաստեղծական պատմութիւնն աւանդում է արձակ ոճով: Այսպէս են՝ օրինակի համար, Հայոց նահապետի արտաքին նկարագրութեան վիպասանական նախերգանքը՝ որպէս և նորա արարքների նկարագրութիւնը»: Ըմբիի հետեւողներից Շն. Միարանը Հայկի առասպելի պատմութեամբ վիպական կերպարանքը՝ դանում է «յառուկ անունների ժողովրդական ստուգաբանութեան» տեղադրական ծանօթութիւնների և վառվռուն բանաստեղծական լեզուի մէջ»<sup>1</sup>

Միւս կողմից պ. Խալաթեանը կարծում է թէ Հայկի պատմութեան մէջ «ոչինչ վիպական բան չկայ. դա հոնտորական նկարագրութիւն է միայն, որի օրինակները դանում ենք նոյն Խորենացուն վերագրուած «Պատուից» գրքի մէջ»: Պ. Խալաթեանն այսպէս ընդհանուր խօսքերով անցնելով և «Պատուից» գրքից ոչ մի օրինակ չբերելով՝ արուեստական է համարում ոչ միայն Հայկի ամբողջ պատմութիւնը, այլ և նոյն իսկ «մակղիւնները» որոնցով պատկերանում են այս կամ այն դիւցազնի ֆիզիկական և հոգեկան յատկութիւնները»<sup>2</sup>

Ահա կարծիքներ միեւնոյն իւր թի մասին, որոնք իբրորու հոկազիր են: Արդեօք վիպական բնագորութիւն ունի՞ այդ պատմութիւնը, թէ չէ: Երկու գէպքում ևս մասնագէտ մարդիկ են կարծիք յայտնողները: Բայց միևնոյն բանը հօ չի կարող վիպական բնագորութիւն ունենալ և չունենալ:

Ժողովրդական ստուգաբանութիւն. — «Եստուկ անունների ժողովրդական ստուգաբանութիւն, տեղագրական ծանօթութիւն, վաստուտն բանաստեղծական լեզու» հարկաւ, զեռ քաւական հիմ շին կարծելու թէ այդ պատմութիւնը ժողովրդական պոյսների հետեւութեամբ է գրուած» Խորենացին կամ

իւր գրաւոր աղբիւրը ինչպէս և ամեն մի ինքնուրոյն գրող հեղինակ կարող էր տեղադրական քաջ ծանօթութիւններ ունենար վառվռուն բանաստեղծական լեզու գործածել, այլ և՛ ժողովրդից բոլորովին անկախ՝ ստուգաբանութիւններ անել: Երկնք միայն վերջին դարերում կատարուած բազմաթիւ ստուգաբանութիւնները՝ Ակոսի, Արկ ուսի, Մարանդ, Մայր անդ և նմանները, որոնք գիտնականների ուղեղից դուրս եկած բաներ են և ժողովրդական պոյսների հետ կապ չունին, եթէ միայն յետոյ գիտնականներից չեն անցել ժողովրդին: Այսպէս և Հարք, Հայկաշէն, Հայք, Գերեզմանք անունների ստուգաբանութիւնը կարող է մի մասնաւոր մարդ իւր սենեակում նստած տեղն էլ արած լինել, մանաւանդ որ այդ անունների յիշատակութիւնն ու ստուգաբանութիւնը Մար Արասից առնելով, Խորենացին ոչ մի ակնարկութիւն չէ անում թէ արդեօք այդ անունների բացատրութեան հետ կապուած աւանդութիւններ կային իւր ժամանակ ժողովրդի մէջ, թէ չէ:

Երկու տեղ միայն կարելի է կարծել թէ իւր խօսքերն է մէջ բերում Խորենացին. «Զաղի ճակատուն շինէ դաստակերտ և տունն կոչէ Հայք, վասն յաղթութեան պատերազմին, այսորիկ աղազաւ և զաւառն այժմ՝ անուանի Հայոց Չոր: Իսկ բլուրն, ուր քաջամարտիօքն անկաւ Բէլ, անուանեաց Հայկ Գերեզման, որ այժմ՝ առին Գերեզմանակք»: Ենթադամ տողերը, թէպէտ և Մար Արան էլ կարող էր գրել, բայց կարող են նաև Խորենացունը համարուել: Անոնք, սակայն, ոչինչ չեն ասում բուն ժողովրդական ստուգաբանութեան մասին, այսինքն մի ստուգաբանութեան մասին, որի հետ կապուած է ժողովրդական աւանդութիւն: Ամեն պատմադիր էր ինչպէս և մեզինց ամեն մէկը, մի հին անուն իւր ժամանակ փոխուած զանելով՝ կարող է այդ փոխուած ձեւն աւելացնել Խորենացին Մար Արասի մէջ Գերեզմանք ձեւն է դաւել, իսկ ինքը նոյն տեղի համար լսել է Գերեզմանակք, ուստի և իւր ժամանակի կոչումն էլ աւելացրել է: Միակ կասկածելի կտորը մնում է. «Այսորիկ աղազաւ և դա-

1. Միարանի նոր. Մասնակ. կր. 64 հոշ:

2. Халат. Арм. Эноц, кр 113:

ւառն այժմ՝ անուանի Հայոց Չորս Արդեօք Մար Արասի՞նն են այդ խօսքերը — որովհետեւ այդպէս գրել կարող էր և Մարարասը, որից նորնութեամբ օգտուել կարող էր մեր պատմագիրը:— Թէ՛ Մորենացին, գտնելով Մար Արասի մէջ ճակատի տեղում շինուած գատակերտի անունը Հայք, իսկ իւր ժամանակ գաւառի կոչումը Հայոց Չորս, իրենից աւելացրած է այդ բացատրութիւնը. թէ՛ հենց ժողովրդի մէջ էլ Հայոց Չորս կոչումը Հայկի յաղթութեամբ էին բացատրում: Շատ հաւանական է, որ առաջին երկու դէպքից մէկը լինի, քանի որ, ինչպէս ասացինք, ժողովրդական աւանդութեան յիշատակութիւն չէ անում Մորենացին: Ինչպէս էլ լինի, այդ միակ մութ կտորը միայն ժողովրդական ստուգարանութիւն համարելով, շատ խախուտ հիմք կունենանք այն մասին, թէ Մորենացին անձամբ օգտուած լինի ժողովրդական զրոյցներից: Սակայն յատուկ անունների այդ ստուգարանութիւնները եթէ ըստ ինքեան ոչինչ չեն յայտնում Հայկի պատմութեան վիպական կերպարանքն ապացուցելու համար, կարող են ննթաղընել տալ, որ ժողովրդականի վրայ հիմնուած լինին անոնք, այսինքն թէ Մարարաս իրենից արած չլինի այդ ստուգարանութիւնները, այլ գուցէ, ժողովրդից վերցրած: Բայց որպէս զի այդ ննթաղութիւնն արժէք ունենայ, հարկաւոր են ուրիշ հիմունքներ այդ պատմութեամբ վիպական բնաւորութեան համար:

Մակդիրներ:— Պ. Մալաթեանը մակդիրներն արուեստական է համարում: աշխատելով ցոյց տալ, որ անոնց մի մասը Ն—Է դարու ինքնուրոյն և թարգմանական զրուածքների մէջ զործածուած կան, այսպէս են երեքը՝ կորովածիզ, անձնեայ, լայնալիւ: Իսկ միւս մակդիրներից հինգի համար սրամիտ նկատողութիւն է անում նա. որովհետեւ կայ շերկայնաբազուկ՝ բառը և արարեր զրուակ իմ որպէս զաղեղն հաստ: ուստի և Մորենացին ինքն է կազմել ադոնց նմանութեամբ նաստաբազուկ և նաստաղեղն բառերը. որովհետեւ կան «սրամիտ» և «խաժակն» ուստի և Մորենացին է կազմել խայտաւիլն բառը: Այսպէս և «գեղախարմար» բառի նմանութեամբ Մորենացին

կազմել է գեղասպաշաւն իսկ «քաջ» բառով բարդուած բազմաթիւ բառերի նմանութեամբ քաջազանգուր: Իսկ միւս մակդիրները — ըագմակոյտ (հսկոյ), անհուն խօլաց եւ ուժաւորաց: յաւերժիք քաջօք և երկայնաղիզօք հասակօք սկայիք մըցողօք, աղեղնաւոր. անձոննի զօրութեամբ, ուշիմ և խոհեմ՝ սկայն, նիզակն արի, երեքթեւանն — ադոնց մասին չէ խօսում պ. Մալաթեանը: Բայց և այնպէս նա եղրակացնում է թէ մակդիրներն անգամ վերածուած են հայոց Ն—Է դարու զրահանութեան երկերին:

Սակայն ոչինչ չէ ապացուցանում պ. Մալաթեանի այդ կարծիքը: Ենթադրենք մի րոպէ, որ Հայկի պատմութեան մէջ եղած բոլոր մակդիրներն էլ Մորենացուց առաջ եղած ուրիշ մատենագիրների մէջ զործածուած լինին, մի՞թէ դա ապացոյց կարող է լինել, թէ Մորենացին այդ մակդիրներն ուրիշներից է քաղել և կամ եղածների նմանութեամբ ինքը շինել: Բանի որ լեզուն նոյն հայոց լեզուն է, անշուշտ լեզուի մէջ եղած պատրաստի բառերից պէտք է օգտուէին Աստուածաշնչի և ուրիշ գրքերի թարգմանիչներն և ինքնուրոյն հեղինակները: Այդպէս որ դատելու լինինք, ամեն մի ժողովրդական վէպի գոյութիւն կարող ենք մերժել: Օրինակ՝ սուսաց վէպի մէջ որքան յաճախ զործածուած կան сыра (земля), чисто (поле), бѣлая (грудь), калена (стрѣла), красное (солнышко) և նմանները, բայց երեւակայեցէք այդ վէպից պատմութիւն գրէ որքին, օրինակ մի Մորենացի կամ Մար Արաս, դորա գրած պատմութիւնը հասնէ յետորդներին, իսկ ժողովրդական վէպը մոռացուի՝ զրի առնուած չլինելով: Մի՞թէ յետնագոյն քննադատն իրաւունք կունենայ հերքելու այդ մակդիրների վիպական լինելը, ուստի և վէպի գոյութիւնը, բերելով այն հիմքը թէ այդ մակդիր ասած բառերը՝ сыра, чисто, бѣлая, калена, красно և ին զործածուած կան այդ Մորենացուց կամ Մար Արասից առաջ:

Այսպէս պ. Մալաթեանի իրը հիմունքը Հայկի առասպելի մէջ եղած մակդիրների արուեստական կամ շինովի լինելու մասին ոչ

մի արժէք չունի: Այդ մակդիրները պահում են իրենց վիպական յատկութիւնը:

Տարօրինակ կարծիք:—Սակայն պ. Խալաթեանն այդու միայն չէ բաւականանում նա մակդիրները ոչնչացնել աշխատելով՝ Հայկի առասպելի ժողովրդական գոյն ունենալն է ուղում ոչնչացնել: Ազոր համար նա ուղղակի միջոցի էլ է դիմում ջանալով ուղղակի արմատից կտրել Հայկի առասպելի ժողովրդականութիւնը: Կտրելի է մինչև անգամ ընդունել, զրում է նա, որ մեր պատմագիրն այս կամ այն բառերն ու վիպական արտայայտութիւնները վերցրած լինի իւր ժամանակի երգերից, բայց աւելի քան անհասանկան է, որ այդ երգերը կարողանային բովանդակել վիպասանութիւններ կամ քերթուածներ այնքան հեռուոր ժամանակներէ, ինչպէս են Հայկի Արամի Տիրբանի և ուրիշների սպրած ժամանակը (ЭПОХА), այսինքն 3000—1500 տարի Խորենացուց առաջ, և յօրինուած լինելն յատկապէս այս առասպելական (легендарный) անձնատրութեանց մասին: Զգիտենք, պ. Խալաթեանն իսկապէս հաւատում է իւր այս առարկութեան զօրութեանը: Եթէ Հայկի Արամ և նա, առասպելական անձեր են, միթէ նոցա 3000—1500 տարի Խորենացուց առաջ ապրած լինելու ժամանակագրութիւնը ճշմարիտ պատմական իրողութիւն է, Եւ կարելի է արդեօք այդ առասպելական, իսկապէս կարկառած ժամանակագրութեան չափազանցութեան կամ հեռաւորութեան վրայ հիմնուած՝ ասել թէ երգեր չէին կարող եղած լինել: Պ. Խալաթեանը նախ ժողովրդի յիշողութեան վրայ շատ թոյլ գաղափար ունի և ապա մոռանում է, որ ինքը «պատմութիւն» չէ քննում այլ առասպել:

Ենթադրենք մի բոլոր, որ Խորենացին ինքը քաղում է Հայկի Արամի Տիրբանի պատմութիւնը ժողովրդական երգերից [բայց ոչ «վիպասանութիւնից»], Նա անշուշտ պէտք է օգտուէր իւր ժամանակի երգերից, եթէ Ե. դարու մարդ է, Ե. դարու երգերից: Իսկ թէ նա այդ երգերի հերոսներին իրենից, կամ

նոյն իսկ երգերի վրայ հիմնուելով (յիշենք, որ թուերը չափազանցիլը ժողովրդականի յատկութիւնն է) 3000—1500 տարի առաջ ապրած է զնում միթէ այդ կը հերքէ վիպական երգերի գոյութիւնը Խորենացու ժամանակ և այն, որ Խորենացին այդ երգերից օգտուել է: Մի բոլոր երեակայինք, որ Խորենացին ԺԹ. դարու մարդ է, և նա մեր «Սասնու ծաերից» օգտուելով պատմութիւն է գրում առասպելական Սանասարին զնելով իրենից 2000 տարի առաջ և ըստ այնմ շարում է և նորա առասպելական որդոյ՝ Առիւծաձև Մհերի, Դաւթի և Պատիկ Մհերի ժամանակները: Միթէ այդու կը հերքուի «Սասնու ծաերի» վէպի գոյութիւնը ԺԹ. դարում: Ժողովրդական զրոյքը կամ երգը ճիշտ ժամանակագրութիւն չգիտէ, նա միայն ընդհանուր խօսքերով է անցնում հերոսներին շատ ու շատ տարիներ առաջ զնելով, կամ չափազանց թուեր ցոյց տալով: Ժողովրդական վէպից ու զրոյցից օգտուողն ինքն արդէն պէտք է կազմէ ժամանակագրութիւն: Իսկ թէ Խորենացու ժամանակագրութիւնն իրենն է կամ իւր աղբիւրներինը՝ այդ մասին մի անգամ ևս խօսք ունեցել ենք և յետոյ ևս այդ մասին պիտի գրենք: Եիշենք միայն, որ նա Վահագն աստուծուն ևս որոշ ժամանակագրութիւն է տալի: Մի օրինակ ևս: Եւհանմայի առասպելական հերոսները հօ վիպական են, բայց այդ հերոսներին Փիրզուսին իրենից քանի՞ հազար տարիներ առաջ ապրած է զնում: Բայց միթէ Եւհանմայի զիւցազների առասպելական լինելովը և նոցա ապրած ժամանակների հեռաւորութեամբը Փիրզուսուց՝ կարելի է հաստատել թէ այդ զիւցազների մասին Փիրզուսու կամ նորա գրաւոր աղբիւրների հեղինակների ժամանակ երգեր կամ զրոյցներ չեն եղել: Այդպիսի դատողութեամբ ոչ միայն հայոց ու պարսի, այլ և ամեն ազգի վէպերի ու զրոյցների գոյութիւնը կարելի է հերքել:

Միւս կողմից, ասել թէ ինչո՞ւ «յատկապէս այս առասպելական անձնատրութեանց մասին» պէտք է երգեր կամ զրոյցներ լինելին՝ այդ ծիծաղելի է, Կարելի է ասել օրինակ, թէ ինչո՞ւ յատկապէս առասպել-

4. Хлаат. Арм. Эпосы, стр. 114:

լական Պոօ թագաւորի մասին է պատմում մի զրոյց կամ ըստ Սրուանձտեանի, վէպ Բուլանընի ժողովուրդը: Բայց երևակայեցէք, մի յՅորենացի կամ նորա աղբիւրը Մար Արաս որ այդ «Հին ժամանակների կապալատ թագաւոր Պոօնի» վէպը լսում է և Պոօ թագաւորին իւր պատմութեան մէջ առնում ու նորա ապրած ժամանակն իրենից 1500 տարի առաջ դնում: Մի՞թէ այդու կը հաստատուի այն թէ Բուլանընի ժողովուրդը Պոօ թագաւորի մասին զրոյց չէ ունեցել:— Մենք աւելի կանգ առանք պ յՍալաթեանի այս կարծիքի մասին քան արժէր: Անցնենք նորա միւս կարծիքին, որ իսկապէս նշանակութիւն ունի, որովհետեւ Հիմնուած է բանասիրական համեմատութիւնների վրայ:

(Եւրոպայից)

Մ. Արեղեան.

### ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Ելիֆտական ծառեր.— Այս տեսակ ծառեր գտնուած են Խաղաղական ովկիանոսի ափերի վերան և ունին շատ հետաքրքիր յատկութիւններ: Գրանց անրաները ելեքորական ոյժ են պարունակում իրենց մէջ, և եթէ մարդ ձեռքով դիպչելու լինի նրանց, ելեքորական հարուածներ կստանայ, Գալուանաչափը (գործիք) այդպիսի ծառերի ելեքորական ոյժի աստիճանն որոշ կերպով ցոյց է տալիս: Եթէ մինչև իսկ ծառից 20 մետր հեռու գտնուի, Այ միայն թռչուններն են խոյս տալիս այդ տեսակի ծառերից, այլ նաև միջատներն էլ չեն սիրում դրանց վրայ ապրել: „L'Electricien“ թերթի գրածին նայելով, այդ ծառերը միմիայն ցերեկներն են այդպիսի զօրութիւն ցոյց տալիս:

\* \*

Գուսնապերի ծառ.— Կալիֆորնիայի յայտնի վիթխարի ծառերի փառքը սրանից յետոյ պէտք է նսեմանայ աւստրալիական գուսնապերի ծառի առաջ, և Աւստրալիան, այդ մտացուած աշխարհը, իր բուսական և կենդանական անդրըհնգողեան

զանազան հաղուադիւտ նմուշներով առաջնութեան պատիւ ձեռք բերել: Գուսնապերի այնտեղ գուսնապերի մի հսկայ ծառ է գտնուած, որի բարձրուղէշ գագաթը 143 մետր (71 սաժէն) բարձր է երկրի երեսից: Եթէ այդ բարձրութիւնը համեմատական չափի վերածենք, կգտնենք, որ այդ ծառի վերին ձիւղերը հասնում են Կեօշի հսկակաւոր տաճարի կաթուղիկէին և կամ այն բարձրութեան, որ կուեննար Պետերբուրգի Բսահակեան մայր տաճարի գմբէթը, եթէ վրան հնարաւոր լինէր Աղէքսանդրեան սիւնը դնել: Իսկ Կալիֆորնիայի առասպելական մեծութեան հասնող ծառերից սա 6 մետրով աւելի բարձր է:

\* \*

Սնկի հիւրն իրելու օձի կծածի դեղ.— Պիզալի անունով Ֆրանսիացի մի բնագէտ այդ նոր միջոցն է առաջարկում օձի կծածի դէմ: Ուսումնասիրելով սնկերի բնախօսական ներգործութիւնը, վերջոյ շեալ զիտնականը իր կատարած բազմաթիւ յաջող փորձերից յետոյ, այն եզրակացութեան հասաւ, որ զանազան սնկերի հիւթը կարող է բոլորովին վտահալի հակաթոյն համարուել թունաւոր օձերի կծածի համար:

Երբ ծովի խոզի և կամ ուրիշ տաքարեան կենդանիների կաշու տակ սնկի հիւթ էլն սրկում, բոլոր փորձի ենթարկուած կենդանիներն այլևս օձի թոյնի պատճառած ցաւերը չէին զգում: Երբ հետեանք էր ստացում, եթէ փորձի համար վերցնում էին եւրոպական յայտնի թունաւոր սնկերը, ինչպէս ճանճասպանն ու գետնասունը:

\* \*

Փողը Կարոյիեան կղզիներում.— Կարոյիեան կղզիների բնակիչները վերջերս միայն սկսեցին առևտուր անել եւրոպացիների հետ: Այժմ „Natur“ լրագրի ասելով, այդտեղ նոր է սկսում եւրոպական ոսկի դրամի գործածութիւնը. սակայն Եան կղզուրիկները, ինչպէս այդ մասին հաղորդում է Գանիացի ճանապարհորդ Խրիստենսէնը „Nord og Syd“, ամօսագրի մէջ, ունին իրենց սեպհական փողը, որը՝ Պալաու կղզիների քարահանքերից մեծ զօւտարութեամբ հանուած՝ կրի որձարարի ահագին կտորներիցն են շինում: Այդ փողերն աշխարհիս ամենանշանաւորներն են: Այդ տարօրինակ դրամներն մեծ մեծ օղակներ են, որոնք իրենց միջին մասում մի մի անցք ունին և աւելի մեծ են քան խոշոր պանրի զլուխներ:

Եթէ այդպիսի փողեր տեղափոխել են ուղում, նրանց անցքերի միջից մի մի ձող են անցկացնում, և զլորելով քաջ տալիս գետնի վրայով: Առաջ այդ փողերը մեծ վարկ ունէին և թանկ էլ

1. Սրուանձտեան, Համով— Հոսով, եր. 74 հո: